



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԲԺԿ. ՎԱՀԱՆ ԱՐՄՐՈՒՆԻ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ № 4


# Թ Ո Ք Ա Խ Տ

ԿԱՄ

## ԲԱՐԱԿԱՑԱԻ

ՊԱՏԿԵՐԱԶՄԸ

ԳԻՆՆ Է 10 Կ.



616.9  
Ա-88

Թ Ի Ֆ 1, Ի 2

Գրքարան Վրաց Հրատ. Ընկ. || Типография Груз. Изд. Т—ва  
1902

616-9

Ա-33

ԲԺԿ. ՎՅՀԱՆ ԱՐԾՐՈՒՆ 00 JUL 2010

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ № 4

# Թ Ո Ք Ա Խ Տ

ԿՍՄ



ԲԱՐԱԿԱՑԱԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Թ Ի Ֆ Է Ի Զ

Տպարան Վրաց Հրատ. Րնկ. ||| Типографія Груз. Изд. Т—ва  
1902

22 FEB 2013

6676

Дозволено цензурою. Тифлисъ, 2 апрѣля 1902 года.



34291-62

### ԹՈՒԲԱԽՏ կամ ԲԱՐԱԿԱՑԱԻ

Ո՛չ մի հիւանդութիւն այնչափ չի տանջում մարդկանց ու այնչափ զոհ չի տանում, որչափ թորախտը:

Մինչև անգամ խօլերան ու ժանտախտը, որոնք երևալով սարսափ են գցում մեզ վրա, այնքան մարդու կեանք չեն հրնձում, ինչքան բարակացաւը, թէև սրան կարծես մարդիկ ընտելացել են!

Ինչի՞նչ:

Որովհետև խօլերան ու ժանտախտը յանկարծ կայծակի նման վրա են տալիս, ու կարճ ժամանակում ահագին քանակութեամբ մարդիկ են սրբում-տանում, այն ինչ թորախտը այդպէս չի բռնկում, նրանց նման սրընթաց հիւանդութիւն չէ. նա կամաց-կամաց, գողի նման թաքուն է իր բանը տեսնում: Նա միշտ մեր մէջն է և անդադար, ամեն օր, ամեն ըոպէ հարիւրաւոր հազարաւոր մարդկանց կեանք է խլում!

Սոսկալի է այս հիւանդութեան արած կոտորածը: Մի տարուայ մէջ նա այնքան մարդ է սպանում, որքան խօլերան 35 տարում:

Օրինակ. անցեալ դարում Պրանսիայում երեք մեծ խօլերա է եղել և կոտորել է 4—5 հարիւր հազար մարդ. դա ահազին կոտորած է, բայց այդ թիւը շատ նուազ կը թուի, եթէ համեմատենք բարակացաւից մեռնողների թուի հետ: Եւ, յիբաւի, նոյն երկրում տարին 150,000 մարդ է մեռնում բարակացաւից. այդ նշանակում է, որ երեք տարուայ մէջ այս ցաւից այնքան մարդ է կոտորվում, որքան խօլերայից 100 տարուայ մէջ! Ռուսաստանում թոքախտից ամեն տարի մեռնում է մօտ 600,000 մարդ: Եթէ այսքան ժողովուրդը կենդանի մնար, նըրանք ամեն տարի Թիֆլիզի պէս չորս քաղաք կը հիմնէին!

Հաշուած է, որ բոլոր մեռնողներից 6-ից մէկը անպատճառ թոքախտից է: Իսկ մի քանիսնների հաշուով նոյնիսկ հինգից մէկը!

Սրանք մեռնողներն են, բայց քանի՞ սը հիւանդ են, տանջվում են երկար տարիներ, ոյժերը կորցրած, աշխատանքից ընկած, միշտ ջերմի մէջ, անողոր հազը թոքերում, անպէտք ծանրութիւն դառած իրանց ընտանիքի շինքին!


Այս հիւանդութիւնը սարսափելի է նամանաւանդ նրանով, որ հարուածում է զբլխաւորապէս (20-ից մինչև 40 տարեկան) երիտասարդ ոյժերը, ուրեմն, կեանքի ու աշխատանքի ամենալաւ ժամանակ, ամենալաւ հասակում:

Եթէ հաշուելու լինենք 20-ից մինչև 40 տարեկան հասակում մեռնողների թիւը, կը տեսնենք, որ երեք մեռնողներից մէկը բարակացաւից է:

Ի՛նչ սարսափելի աւերումն է մի երկրի համար, երբ նրա բնակիչներից այդքան հոգի կորչում-ոչնչանում են: Երկիրը զրկվում է իր ամենալաւ բանուոր ձեռներից, երիտասարդները կորչում են առանց ժառանգ թողնելու, իսկ ամուսնացածները թողնում են իրանց ընտանիքը առանց պաշտպանի և առանց կերակրող ձեռքի:

Ահա թէ ի՛նչ զարհուրելի ցաւ է թոքախտը: Ուրեմն լաւ ծանօթանանք մարդկութեան այս ճիւղաղի հետ, որպէսզի կարող լինենք կռուել նրա հետ:

Վ. Արժուճի



Նկ. 1. Մարդու ներքին գործարանները:

Ա.

Թ Ո Ք Ա Խ Տ Ա Ի Ո Ր Ը


Ո՞վ չի տեսել թորախա ունեցող մարդկանց:

Այս ողորմելի արարածները մատաղ հասակից սկսած տանջվում են արեան պակասութիւնից, սրտի բաբախումից ու գլխացաւերից: Նրանք լինում են թուլակազմ, դէմքերը գունատ, հեշտ յոգնում են, ամեն թեթեւ մրսելուց հիւանդանում, հարբուխ ու հազ ընկնում: Որոշ հասակում, երբեմն 10—15 տարեկան դարձած (երբեմն էլ աւելի ուշ), սկսվում են թորախտի նշանները:

Այս նշաններից ամենից շատ վախեցնում է ծնողներին և իրան-հիւանդին հազը:

Հազը սկզբում երբեմն ուշ-ուշ է գալիս և չոր է, բայց գնալով աւելի շուտ-շուտ է երեւում և կամաց-կամաց աւելի

փափկում է, այսինքն. խորիս է դուրս գալիս: Խորիսը սկզբներում թքի նման է և շատ սակաւ, բայց նա էլ հաղի նման դնալով սաստկանում է, առատանում ու թանձ-



Նկ. 2. Թոքեր և սիրտ:

1) Ատոլ թոքեր. 2) Շնչափող, որ մտնում է թոքերի մէջ ու բաժանվում անթիւ մանր խողովակների.—դրանց միջով օդը լցվում է ու տարածվում թոքերի մէջ: 3) Սիրտ, որ սեղմուած է թոքերի մէջ: Նրանից երակներ են դուրս գալիս և նոյնպէս բաժանվում են ու տարածվում թոքերի մէջ:

րանում (ձուռի սպիտակուլցի նման), թարախ դառնում և դեղնաւուն գոյն ստանում: Եթէ հիւանդին ջրով բաժակի մէջ թքել տանք, կը տեսնենք, որ խորիսը իջնում է տակը:

Այս խորիսը անսպառ է, խեղճ հիւանդը անդադար հազում է և չի կարողանում մաքրել իր թոքերը.—խորիսը միշտ լիքն է կրծքի մէջ:


Բացի խորիսից, հիւանդը երբեմն արիւն էլ է թքում:

Արիւնը կամ խորիսի հետ է դուրս գալիս, կամ առանձին. երբեմն հիւանդը յանկարծ թեթեւ հազում է ու բերանը լցվում է արիւնով: Արիւնը շատ ու քիչ է լինում, երբեմն միայն արեան թելեր են երեւում խորիսի մէջ, երբեմն մի երկու թէյի գդալ մաքուր ալ արիւն է դուրս գալիս, բայց երբեմն էլ հիւանդը ուղղակի արնաբամ է լինում ու մեռնում:

Ի հարկէ ամեն արիւն թքող թոքախտ չունի. արիւնհոսութիւնը ուրիշ պատճառներից էլ է լինում, բայց դարձեալ հէնց որ թքի մէջ արիւն երեւայ, իսկոյն պէտք է բժշկի դիմել: Բժիշկը կը քննի հիւանդին ու կ'իմանայ, թէ սրտեղից է այդ արիւնհոսութիւնը:

Թոքախտաւորը կորցնում է ախորժակը, երեկոները անդադար տանջվում է կրծքացաւից, ջերմ է ունենում, գիշերները քրտնում է, և այս դրութեան մէջ ի հար-

կէ նիհարում է, կարծես հարլում է: Եթէ հիւանդութիւնը չի անցնում ու չի լաւանում, խեղճ հիւանդը ուղղակի կմախք է դառնում:



Նկ. 3. (Առաջից):


Բարակացաւոր 18 տարեկան աղջիկ:

Այս պատճառով էլ ժողովուրդը թորախտին բարեկացաւ և նիւրբ անուններ է տալիս:

Անտաների է խեղճ բարակացաւորի դրութիւնը:

Նիհարած, կմախք դառած, աչբերը,

թշերը խոր ընկած, կուրծքը ներս գնացած, իսկ մէջքը կզացած, կողերը դուրս պրծած, ուսերը բարձրացած, վիզն ու անդամները բարակած, թշուառ հիւանդը



Նկ. 4. (Քամակից):

Բարակացաւոր 18 տարեկան աղջիկ:

անդադար տանջվում է շերմից, գըլխացաւերից ու կրծքացաւերից, անքնութիւնից ու գիշերային սառը քրտնքից, ծանր հոգեկան դրութեան մէջ ընկած, սար-

սափելի խռպոտ հազը միշտ կրծքում և գարշահոտ ու թարախոտ խորիւր միշտ կոկորդում:

Բ

ԹՈՒԲԱՆՏԸ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆ Ե

Վարակիչ են կոչվում այն հիւանդու-  
թիւնները, որոնք հիւանդից անցնում են  
առողջին:

Ժողովուրդը դրանց ուրիշ անուններ էլ  
է տալիս, օր. կպչողական, փոխուովի,  
դիպչող: Այսպիսի հիւանդութիւններ շատ  
կան: Սրանք են. խօլերան, ժանտախտը,  
տիֆը, բզացաւը (գիֆթերիտը), քութէշը  
կամ կարմրախտը, կարմրուկը, ծաղիկը և  
մի քանի ուրիշները\*):

Բաւական է, որ տան մէջ մէկը այս  
հիւանդութիւններից ընկնի,— հիւանդից ու-  
րիշներն էլ կը կպչեն, կը վարակուեն. սրան-  
ցից կը վարակուեն էլի նոր մարդիկ, ու  
հիւանդութիւնը արագութեամբ կը տարած-  
ուի ամբողջ գիւղի կամ քաղաքի մէջ:

\*) Տե՛ս մանրամասն իմ «Վարակիչ հիւանդութիւննե-  
րը և նրանց թոյնը», Թիֆլիզ, 1902 թ.

Թոճախսն էլ նոյն ձեւով է տարածվում:  
շատ յաճախ է պատահում, որ ընտանիքից  
մէկը ուրիշ երկրում բարակացաւ է ստա-  
նում ու, տուն վերադառնալով, վարակում է  
իր տնեցիներին: Բժիշկները պատմում են,  
թէ մի գիւղում ոչ ոք չէր հիւանդացել  
թոքախտով, այդտեղ բնակութիւն է հաս-  
տատում մի թոքախտաւոր ու սրանից հի-  
ւանդութիւնը տարածվում է գիւղի մէջ:

Մի վանք մի հիւանդ է մտնում ու, չորս  
ամիս չանցած, վանականներից իննը հոգի  
վարակվում են և նրանցից չորսը մեռ-  
նում են:

Նոյն ձեւով տարածվում է բարակա-  
ցաւը բանտերում, դօրանոցներում, արհես-  
տանոցներում և առհասարակ այնպիսի տե-  
ղերում, որտեղ մարդիկ շատ մօտ են մի-  
մեկից:

Այդ դեռ ոչինչ:  
Կարող է պատահել, որ մի թոքախտա-  
ւոր հիւանդութիւնը տանի իր հետ և նոր  
երկրներ վարակի:

Այսպէս, օրինակ, մի մեծ կղզու վրա  
երբէք թոքախտ չէր տեսնուած, եւրօպացիք  
գրաւեցին այդ գեղեցիկ կղզին ու հիւան-  
դութիւնը գցեցին ընկի ժողովրդի մէջ:

Այսքան օրինակները բաւական են:

Այժմ այլևս ոչ ոք չի կասկածում, որ բարակացաւը վարակիչ հիւանդութիւն է:

Փորձերով էլ կարելի է հաստատել:

Օրինակ. եթէ թորքախտաւորի խորիւր ուտելիքի հետ խառնենք, կամ ուրիշ կերպ մի կենդանու ուտացնենք, և կամ թէ չէ չորացնենք ու օդի հետ շնչել տանք, այդ կենդանին կը վարակուի:

Մենակ մարդը չէ, որ բարակացաւ է ստանում, անասուններն էլ յաճախ հիւանդանում են այդ ցաւով:

Թորքախտը տարածուած է կովերի, այծերի, ոչխարների, նոյնպէս և շան, հաւի ու միւս թռչունների և խոզերի մէջ: Ամենից շատ հիւանդանում են կովերը: Կովերի թորքախտը կոչվում է գոհարախտ:

Այս տեղեկութիւնը չափազանց մեծ կարեւորութիւն ունի, որովհետեւ, ինչպէս կը տեսնենք, հիւանդ կովի կաթի մէջ էլ բոխախտի բոյն կայ և ուրեմն, տան կաթն էլ վարակիչ է: Հիւանդ կենդանու միտը նոյնպէս երկիւղալի է գործ ածել, որովհետեւ թորքախտի թոյն է պարունակում իր մէջ, թէեւ լաւ եփած միտը անվնաս է:

Գ

Թ Ո Ւ Ք Ա խ Տ Ի Թ Ո Յ Ն Ը

Ասածներիցս պարզ է, որ թորքախտաւորի մէջ մի բան կայ, որը դուրս է գալիս նրանից ու մտնելով առողջների թորքերը, վարակում է-հիւանդացնում սրանց:

Ի՞նչ է այդ բանը:

Այդ թորքախտի թոյնն է: Նա գտնվում է հիւանդի թորքերի մէջ: Հիւանդը հազալով անդադար, տարիների ընթացքում դուրս է թրում խորխի հետ այդ թոյնը, բայց սա դարձեալ գոյանում է:

Ուրեմն այդ թոյնը հասարակ թոյնի նման չէ: Հասարակ թոյնը, օրինակ. սուլէման, մկնդեղը, փիփոնը և ուրիշները մի քանի ժամուայ մէջ կամ սպանում են հիւանդին, կամ ոչնչանում են նրա մարմնի մէջ,—և ամեն բան վերջանում է:

Վարակիչ հիւանդութիւններինը (ուրեմն և թորքախտինը) այդպէս չէ: Նրանք անդադար անում են ու շատանում բոխերի մէջ և ինչքան էլ հիւանդը արտաթքի խորխի հետ, չեն վերջանայ:

Մինչեւ վերջին ժամանակներս մենք

չէինք ճանաչում այդ թոյնը, իսկ հիմա գիտենք:

Վերցնենք այդ խորխից մի փոքրիկ մասնիկ, քսենք մի կտոր բարակ ապակու վրա, դնենք մանրացոյցի խողովակի տակ և նայենք վերեւից:

Դիտէք ինչ է մանրացոյցը: Դա մի գործիք է, որի միջով առարկաները 1,000—2,000—4,000 անգամ մեծանում են \*):

Ահա այդ գործիքը. մէկը խողովակի միջով դիտում է մի կաթիլ ջուր, որ կաթացրած է ապակու կտորի վրա:

Ահա թէ ինչ է տեսնում դիտողը այդ կաթիլ ջրի մէջ: Նա տեսնում է անհամար մանր շարժուն էակներ, որոնց պարզ աչքով անկարելի է նկատել:

Մանրացոյցի ապակու վրա քսենք մի քիչ բարակացաւօտի խորխից:

Ահա թէ ինչ կրտեսնենք:

Այս մանր գծերը կենդանի էակներ են. նրանք շարժվում են, կերակրվում ու անդադար բազմանում: Նրանք ձեռափայտի նմանութիւն ունեն. դրա համար էլ նրանց

\*) Մանրացոյցը կոչվում է նոյնպէս և խոսորացոյց. նրա մանրամասն նկարագրութիւնը տե՛ս իմ «Կարակիչ հիանդութիւնները» գրքոյկի մէջ:


34291-62

անունը դրել են թոխախի ցուպիկ (ցուպ բառից, որ նշանակում է ձեռափայտ) կամ բացիլ:




Նկ. 5. (Մարդը մանրացոյցով նայում է):

Հիմա վերցնենք մեռածի թորերից չափազանց բարակ հազիւ նշմարելի մի շերտ



(այսպիսի բարակ շերտ չի կարելի ձեռքով կտրել, դրա համար առանձին մեքենայ կայ) և դնենք նոյն մանրացոյցի տակ:




Թորթխտի ցուպիկները:  
(Հազար անգամ մեծացրած):

Տեսնում էք մանր ծակերը, իսկ ծակերի եզրերին ահագին քանակութիւն նոյն մանր էակների (ցուպիկների), որոնք արդէն ծակծակոտել են թորթերը և ծակերի եզրերը ուտում են:

Այսպիսով նրանք ուտում-ոչնչացնում են թորթերը, ինչպէս որդը ուտում է խընձորը, թրթուռն ուտում է ծառի տերեւը և ցեցն ուտում է մեր շորերը:

Եւ քանի գնան, կը բազմանան այդ էակները, կը մեծացնեն ծակերը, յետոյ մանր փոսերը կը միանան ու մեծ խոռոչ-

ներ կը կազմեն և այսպիսով կամաց-կամաց թորթերը կը փչանան, կ'ուտուեն: Եթէ բարակացաւոտի թորթերը կտրենք ու նայենք, կը սարսափենք: Նրանց մէջ, ինչ-



Ցուպիկներն ուտում են թորթերը:  
(Հազար անգամ մեծացրած):

Ցուպիկներն արդէն բաականին կերել են թորթերը և փոսեր են գոյացրել: Նրանք խոնրած են փոսերի պատերին ու շարունակում են ուտել թորթերը:

պէս պանրի մէջ, մեծ ու փոքր փոսեր ու խոռոչներ են գոյացել ու լցուած են զազրելի վահրով, կերուած թորթերի մասնիկներով, արիւնով և այլն:

Այս վահրն է, որը կազմում է հիւանդի խորխը և որի մէջ այնքան թորթախտի ցուպիկ կայ:

Ահա թէ ինչպիսի ահուելի թշնամի են այդ անտեսանելի էակները:

Բայց այդ բոլորը չէ:

Մենակ թորերում չէ նա բուն դնում: Նա մտնում է և աճում նոյնպէս և կոկորդի, աչքերի, ուղեղի, ոսկորների, պլոճիկների, աչքի մէջ. մի խօսքով, համարեա մեր բոլոր մարմնամասերի մէջ: Եւ ամեն ինչ նրանք ուտում, մաշում, աւերում, ոչնչացնում են: Քանիքանի մանուկներ մահանում են ուղեղի ու աղիքների բորբոքումից, որոնք այդ էակների գործն են, քանիքանի երեխաներ մեռնում են ոսկրների փառմից:

Այդ բոլորը ցուպիկների գործն է:

Դ.

ԶԳՈ՛ՅՇ ԵՂԷՔ ԹՈՒՔԱՆՏԱԻՈՐԻ ԹՔԻՑ, ՈՐՈՎՂԵՏՆԵՒ ՆՐԱ ՄԷՋՆ Է ԹՈՅՆԸ

Ուրեմն վարակիչ թոյնը գտնվում է հիւանդի խորխի մէջ:

Այդ խորխից շատ զգոյշ պիտի լինել: Մի գիտնական հաշուել է, որ մի օրուայ

մէջ թորախտաւորը խորխի հետ դուրս է գցում 7 միլիարդ բացիլ (1 միլիարդը = 1000 միլիօնի):

Ի՞նչ զարհուրելի թիւ է այդ!:

—Ուրեմն էլ ի՞նչպէս կարելի է պաշտպանուել դրանցից, կը հարցնէք դուք:

—Շատ հեշտ կերպով, կը պատասխանեմ ես:

Հսեցէք:

Քանի որ խորխը թաց է, նա վսանգաւոր չէ: Խորխը այն ժամանակն է միայն երկիւղալի դառնում, երբ չորանում է:

Ահա թէ ինչի:

Վարակիչ թոյնը (այսինքն այն մանր ցուպիկները) հօ չի կարող թաղ խորխի միջից դուրս թռչել ու առողջ մարդու թորերը մտնել, բայց երբ խորխը չորանում է, նա խառնվում է թողի հետ, բարձրանում է նրա հետ օդը ու օդի հետ էլ մտնում մեր թորերը:

—Չոր խորխն ի՞նչ է, որ վնասի մարդուն. չէ՞ որ չորացած խորխի մէջ ցուպիկներն էլ են չորացել, կը մտածի ընթերցողը:

Բանն էլ հէնց այդ է, որ չորացած ցու-

պիկները, ընկներով մարդու թոփերը, կենդանանում են, որոհեաեւ թորերի ներսը տաք է և խոնաւ: Այնտեղ նրանք սարսափելի արագութեամբ բազմանում են, տարածվում թորերի մէջ և ուտում նրանց:

Այդ բանը ամենքը պիտի հասկանան:

Երբեմն մենք, բժիշկներս, ուղղակի սարսափում ենք, երբ մտնում ենք թորախտով հիւանդների տները: Հիւանդը անդադար թըում է իր շուրջը, կամ յատակի վրա, կամ սենեակի անկիւնը, կամ թէ չէ իր թաշկինակի կամ մի կտոր շորի մէջ, և չի հասկանում, որ այդ խորիւր կը չորանայ և սենեակը կը լցուի նրա փոշիով: Չորացած խորիւր կը նստի նոյնպէս և սենեակի միջի կահ-կարասիքի և ամեն պարագաների վրա, նա կը խառնուի նաև կերակրին, կ'ընկնի խմելիքների մէջ և այլն:

Այսպիսի անզգոյշ հիւանդի սենեակը մտնելն էլ, նրա հետ խօսելն էլ երկիւղալի է, ուր մնաց թէ նրա հետ հաց ուտելը:

Բայց հիւանդը պիտի հասկանայ, որ անմաքրութիւնը, խորխի ամեն տեղ գցելը ոչ միայն ուրիշներին է վնաս, այլ և իրան: Եւ, ճշմարիտ, չէ որ այդ փոշիացած

խորիւր իր թորերն էլ է վեռադառնում, իր կերակրի վրա էլ է նստում ու ստամոքսը մտնում: Ուրեմն եթէ թորախտաւորի ստամոքսը և աղիքները դեռ առողջ են, նրանք էլ կարող են հիւանդանալ, որովհետև ասացինք, թէ ցուպիկը աղիքներում էլ է բուն դնում ու աներումներ դործում:

Ուրեմն թորախտաւորը հէնց իր սեփական առողջութեան համար չպէտք է դէս ու դէն խորխի, այլ խորիւր պիտի հաւաքի խորխամանի մէջ, բայց դրա մասին յետոյ:

## Ե

ՈՒՎՔԵՐ ԵՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՒՄ ԹՌՔԱԽՏՈՎ

Երբոր մենք, բժիշկներս, զգուշացնում ենք մարդկանց հիւանդութիւնների դէմ, միշտ միեւնոյն պատասխանն ենք ստանում.

— «Բաս ինչի այս ինչը չհիւանդացաւ. ինչի այս ինչը չվարակուեց»:

Մէկ օր մի մարդ այսպէս բան ասաց. — Բժիշկ, ձեր ասելով մարդկանց մի երբորդականը թորախտ ունի, հազում է ու թըրում ամեն տեղ, թուրը չորանում է ու լցնում օդը, նստում է մեր ամենքիս ու

տելեղէնի ու խմելեղէնի վրա ու մտնում է մեր ներսը. բայց ինչպէս է, որ մարդիկ էլի ապրում են, ինչպէս է, որ բոլորն էլ չեն վարակվում ու աշխարհս չի վերջանում:

Այս պարօնը մի տեսակ ծաղրի ձևով էր խօսում. բայց ես նրան Աւետարանի խօսքերով պատասխանեցի, թէ սերմը ամեն տեղ չի բուսնի: Յուպիկն էլ մի սերմ է, նա էլ պարարտ հող է պահանջում:

Եթէ հողը պարարտ չէ, այսինքն. եթէ մարդ տրամադրուած չէ հիւանդանալու, թէկուզ միլիօնաւոր բացիւններ կուլ տայ, չի հիւանդանայ:

Ուրեմն բացիւն ամեն մարդու մէջ չի կարող բուն դնել ու զարգանալ. դրա համար հարկաւոր է, որ մարդ տրամադրուած լինի:

Տեսնենք, թէ ո՞վքեր են տրամադրուած հիւանդանալու:

Ամենից առաջ պէտք է յիշենք բարակացաւ ունեցողների զաւակներին:

Սրանք լինում են առհասարակ թուլակազմ, սակաւարիւն, կուրծքները սեղմուածնեղացած, կուներն ու ոտները բարակ, մէջքները երբեմն կղացած, դեղձախտոտ \*):

\*) Գեղձախտը մի հիւանդական գրութիւն է. երե-

Մորթին նազուկ, համարեա թափանցիկ է լինում, դէմքի գծերը չափազանց նուրբ են ու տխուր արտայայտութիւն են ունենում:

Այդպիսի երեխաները առհասարակ լաւ չեն զարգանում, այլ մնում են նիհար ու դունատ. երբեմն այդ դունատ թշերը կարմրում-վառվում են: Տասնութ-քսան տարեկան աղջիկը 13—14 տարեկանի նման է, տղաներն էլ աղջկայ տեսք ունեն: Ընդհանրապէս մեղմ բնաւորութիւն ունեն նրանք, բայց հեշտ գրգռվում են, զարմանալի դուրալի և գրաւիչ բնաւորութեան տէր են ու հեշտ յափշտակվում են ամեն բանով:

Յետոյ հիւանդանում են վաա մնունդ ունեցողները, գետնափօրերի և նկուղների մէջ ապրող խեղճերը, չափազանց շատ աշխատողները, վատ-ապականուած օդի մէջ ապրողները (օր. բանտերում, արհեստանոցներում):

Առհասարակ ամեն բան, ինչ որ թուլացնում է մեր մարմինը, թողքախտի պատճառ է դառնում:

խալի վզին, ծնօթատակին մեծ-մեծ խլեր են դուրս գալիս, ուռչում, թարախակալում, բացվում ու խոց դառնում: Նրանց ականջները բորբոքվում են, գլխին խոցեր ու ջրջրովներ են գոյանում, երբեմն էլ յոդերը բորբոքվում են:

Զարմանալի կերպով ազդում են մանուկներին վրա վարակիչ հիւանդութիւնները, գլխաւորապէս կարմրուկն ու ծաղիկը: Շատ երեխաների մէջ այս հիւանդութիւնների միջոցին են լոյս ընկնում թոքախափ առաջին նշանները:

Աւելացնենք, որ հիւանդանում են ամեն հասակի մարդիկ—ծճկեր երեխաներից սկսած մինչև 80 տարեկան հասակը—իսկ գլխաւորապէս (ինչպէս վերին ասել ենք) 20-ից մինչեւ 40 տարին:

## 2

ԻՆՉՊԷՍ ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆՈՒՆԷԼ ՎԱՐԱԿՈՒՄԻՅ

Ով ուշադրութիւնով կարդացել է մինչեւ այժմ դրածս, նա արդէն կը հասկանայ, թէ ինչպէս պէտք է պաշտպանուել վարակուելուց:

Դարձեալ, լաւ հասկանալու համար, ասենք.

1. Թշնամին հիւանդի խորին է. ուրեմն եթէ տանը հիւանդ կայ, պէտք է նրա խորը հաւաքել թքամանի մէջ ու օրական մի քանի անգամ դուրս տանել-մաքրել:

Հիւանդը միշտ պիտի խորխամանի մէջ քֆի, եւ երբէք յասակի վրա, կամ քաւիկնակի մէջ\*):

Ամանի մէջ կարելի է մի քիչ էլ ջուր լցնել (կամ աւելի լաւ, կրի խառնուրդ, իսկ քաղաքներում կարբուրտան թթու): Սրա նըպատակն այն է, որ խորիւր միշտ թաց մնայ:

Քաղաքներում առանձին թքամաններ են ծախում. գիւղացիք կարող են վերցնել մի բաժակ, կամ մի հողէ աման, մի փոքրիկ խուփ էլ վրան:

Խորխամանի ծակը պիտի միշտ կախած լինի, երբէք չպէտք է հող, աւաղ, թեփածել մէջը: Արհեստանոցների մէջ ամեն անկիւնում այդպիսի թքամաններ պիտի դըրուած լինեն:

2. Հիւանդի թաշկինակները, բարձի երեսները, սաւանները, առհասարակ բոլոր սպիտակեղէնը պէտք է առանձին լուանալ (ուրիշների հետ չխառնել) և, եթէ կարելի է սօդայի կամ կրախառն ջրում, կամ գոնէ հասարակ ջրում մի 10—15 րոպէ եփ սալ:

\*; Լուսաւորուած երկրներում արգելուած է մինչև անդամ փողոցներում թքելը, և հիւանդները գրպաններում թքամաններ են ման ածում:

Եփ տալով միայն կարելի է թոյնը ոչնչացնել, հասարակ կերպով լուալով, թէկուզ հէնց եռման ջրում էլ լինի, անկարելի է ոչնչացնել թոյնը:

3. Հիւանդի ափսէները, բաժակները, չանդալ-դանակը, գդալը, պէտք է նոյնպէս ջրում եփ տալ:

4. Հիւանդի սենեակը մաքրելիս, յատակն աւելիս չպէտք է թող բարձրացնել, այլ սրբելիս պէտք է ջրջնկնել յատակը, իսկ պատերը, կահ-կարասիքը թաց շորով սրբել ու այդ շորը եփ առ առանձին ջրի մէջ:

5. Քանի որ տնային կենդանիներն էլ թորբախտ են ունենում, հետեւաբար պէտք է նրանցից էլ պաշտպանուել: Կարը պէտք է լաւ քափացնել, իսկ միսը լաւ եփել:

6. Թորբախտոտ ծնողները երբէք չպէտք է մոռանան, որ իրանց զաւակները կարող են ստանալ այս սարսափելի ցաւը, ուստի պէտք է չափազանց զգոյշ լինեն:

Եթէ մայրը հիւանդ է, նա չպէտք է ծիծ տայ երեխային, այլ պիտի ծծմայր վարձի: Մեծ երեխաներին էլ չպէտք է իր ծոցը քնեցնի, ոչ էլ իր սենեակում, եթէ տան մէջ միբանի սենեակ կայ: Ամե-

նից լաւն այն կը լինի, որ երեխային ուրիշի յանձնեն պահելու:

7. Առողջ ծնողները եւս պիտի խնամքով ու զգուշութեամբ պահեն երեխաներին, որ պահպանեն նրանց վարակումից: Չպէտք է թոյլ տալ, որ ամեն հասնող գրկի-համբուրի ձեր երեխային, ոչ էլ պէտք է ուրիշների տունը գրկել, եթէ կասկած կայ, որ այնտեղ հիւանդներ կան: Ամենից սարսափելին այն է, որ ծամած հաց են դնում երեխայի բերանը. եթէ ծամողը հիւանդ է, երեխան էլ կը հիւանդանայ:

8. Կացարան վարձելիս պէտք է տեղեկանալ, թէ սվքեր են ապրել այնտեղ, և եթէ կասկած կայ, որ թորբախտաւոր է եղել, պէտք է անպատճառ ազտահանել կամ չվարձել:

9. Արհեստանոցներում, զանազան գործարաններում խորխամաններ պիտի ունենալ, և բանուղիներին ստիպել մէջը թքելու: Բանուորներն իրանք պիտի հետեւեն, որ ոչ որ յատակի վրա չթքի:

## Է

Ի՞նչ ՉՊԷՍ ՊԷՏԲ Է ՊԱՀԵԼ ԹՈՒՄԱԽՏԱԻՈՐ ԾՆՈՂ-  
ՆԵՐԻ ԶԱԻԱԿՆԵՐԻՆ

Մենք ասել ենք, որ թորախառուորից  
ծնած երեխաները հեշտութիւնով են հի-  
ւանդանում, որովհետեւ տրամադրուած են  
լինում:

Ուրեմն ծնողները պիտի ամեն միջոց  
գործ դնեն իրանց զաւակին փրկելու հա-  
մար:

Մենք ասեցիք, որ հիւանդ մայրը չպիտի  
ինքը ծիծ տայ երեխային, այլ պէտք է յանձնի  
մի առողջ ծծմօր, և ամենից լաւն այն կը լինի,  
որ հեռացնի նրան իրանից: Երեխային չպէտք  
է քնացնել այն սենեակում, որտեղ հիւանդն  
է, այլ առանձին: Երեխայի սենեակը պի-  
տի ընդարձակ ու լոյս լինի, արևը մէջը:

Ամենափոքր ժամանակից սկսած երե-  
խային պիտի սովորեցնել սառը ջրի: Ծննդից  
մի-երկու ամիս անցնելուց յետոյ, նրա լողա-  
րանի ջրի տաքութիւնը պիտի հասցնել 24<sup>0</sup>  
և կամաց-կամաց դարձեալ պակսեցնել մին-  
չև 16<sup>0</sup>: Յետոյ, բանի մեծանայ երեխան,  
այնքան աւելի պիտի սառեցնել ջուրը,

այնպէս որ 2—3 տարեկան տղան կարող  
լինի արդէն սենեակի ջրով լողանալ:

Հագուստը պիտի լինի ոչ հաստ և ոչ  
շատ տաք, որ երեխան չբրանի: Պէտք է սո-  
վորեցնել թեթեւ հագնուելու:

Ամեն օր, երեխային պիտի դուրս տա-  
նել լաւ հագցրած, և ընտելացնել ամեն  
եղանակի, ամառ-ձմեռ: Եթէ տանը մեծ  
բակ կայ, կամ այգի, երեխան պիտի լաւ  
եղանակին ամբողջ օրը դուրսը լինի:

Կերակուրը պիտի սննդարար լինի: Կա-  
թը միմիայն առողջ կովից պիտի վերցնել և,  
բացի դրանից, ամեն անգամ լաւ տաքացնել:  
Միս պէտք է շատ տալ, ինչպէս նաև ձու: Բայց  
մինչեւ մի տարեկան հասակը դիտաւոր սը-  
նունդը կաթը պիտի լինի:

Թոյլ երեխաներին չպիտի ծանրաբեռ-  
նել պարապմունքներով ու մտաւոր աշխա-  
տութիւններով: Ուշ պիտի ուսումնարան  
տալ, ամառը պիտի ազատ թողնել ուսու-  
մից և դիւրը տանել:

Առհասարակ պատանեկութեան հասա-  
կումն է յայտնվում ժառանգաւորների թո-  
րախտը, հետեւաբար այս միջոցին պիտի  
չափազանց զգոյշ լինել և ամեն մի փոքր  
տկարութեան վրա ուշ դարձնել: Մանա-

ւանդ լաւ պէտք է պահպանել երեխային մրտերուց: Ամեն հաղ պիտի բժշկել: Լաւ պէտք է պահպանել նրան նոյնպէս և դանազան վարակիչ հիւանդութիւններէն<sup>\*</sup>), որովհետեւ բարակացաւը յաճախ դրանց միջոցին է երեւան դալիս:

## Ը

ԻՆՉՊԷՍ ՊԵՏԻ Է ԽՆԱՄԵԼ ՀԻՒԱՆԴԻՆ

Մի գիտնական ասել է, որ թորախտի դէմ ամենից ազդու միջոցը լաւ առողջապահական պայմաններն են:

Եւ ամենից լաւ միջոցներն են.—Մաքուր օդը և լաւ սնունդը:

## Ա. Մ ա զ ու Ր օ Ղ

Մաքուր օդն այն օդն է, որի մէջ թող չկայ, զանազան հոտեր չկան:

Դրսի օդը ներսի օդից աւելի մաքուր է, գիւղի օդը քաղաքի օդից: Քանի բնակուելու տեղը բարձր լինի, մարդ այնքան աւելի լաւ օդ կը ծծի, այնպէս որ սարերի օդը աւելի մաքուր է, քան դաշտերինը և այլն:

<sup>\*</sup>) Տե՛ս իմ „Վարակիչ հիւանդութիւնները և նրանց թոյնը“:

Մաքուր օդը մաքրում է մեր թորերը: Եթէ հիւանդը կեղտոտ օդի մէջ ապրի, բացի ներն աւելի արագ կ'աճեն թորերի մէջ, իսկ մաքուր, թարմ օդը թոյլ չի տալիս նրանց աճելու և շատանալու:

Ուրեմն հիւանդին պէտք է, որքան կարելի է, թարմ օդի մէջ պահել:

Դրա համար ամառ-ձմեռ, լաւ եղանակին, միշտ բաց արէք սենեակի լուսամուտները, որ օդը թարմանայ: Հիւանդը պիտի շուտ-շուտ դուրս գայ տնից դրօսներու, ի հարկէ տաք հագնուած: Ձմեռը, ցուրտ եղանակին ու քամուն, պիտի աշխատել միշտ քթով շնչել (և ոչ թէ բերանով), որպէսզի սառն օդը չլցուի թորերը:

Այստեղ մի երկու խօսք պիտի ասենք մեր ժողովրդի մէջ տիրող օդակախութեան մասին:

Մեր ժողովուրդը, ճշմարիտ որ, օդից վախում է: Դռներն ու լուսամուտները փակում են ու ներս մտնում: Երբոր այսպէս փակուած սենեակի դուռը բաց ես անում, մարդու շունչ բռնվում է, այնպէս թանձր ու դարչահոտ է լինում դարձած այնտեղի օդը:

Մի գիտնական ասել է. «Արտա-

չնչած օգը թոյն է»։ Ուրեմն, եթէ մի սե-  
նեակ տաք է և այնտեղ մարդիկ են շնչում,  
այնտեղի օգը թունաւոր կը լինի։

Օգը շնչում ենք, որպէսզի նա, մտնե-  
լով մեր թոքերը, մաքրի մեր արիւնը։ Եթէ  
օգը ապականուած է, արիւնը չի կարող մաք-  
րուել, այս պատճառով էլ թանձր օգի մէջ  
երկար մնացողը թուլութիւն է զգում, գըլ-  
խացաւ է ունենում։

Եթէ առողջի վրա այդպէս է ազդում  
վատ օգը, ապա ուրեմն որքան աւելի վնա-  
սակար պիտի լինի նա թոքախտաւորի հա-  
մար, որի արիւնը առանց այն էլ թունա-  
ւորուած է և թոքերը հիւանդ։ Միայն  
լաւ և մաքուր օգը կարող է մաքրել նրա  
թոքերը և հեշտացնել հիւանդի շնչառու-  
թիւնն ու մաքրել արիւնը։ Լաւ օգի մէջ  
հիւանդի ախորժակը լաւանում է, ոյժերը  
վրա են գալիս, կրծքի ցաւերը պակասում  
են, քրտինքը սակաւ է լինում և այլն։

Ուրեմն ամառ-ձմեռ, գիշեր-ցերեկ քո-  
ֆալսաւորը պէ՛տ է մաքուր օդում ապրի։

Չպէտք է վախենալ մրսելուց և լու-  
սամուտները յաճախ պէտք է բաց թողնել։

Այժմ առանձին «բուժարաններ» կան  
բարակացաւորների համար, որտեղ հիւանդ-

ներին ամառ-ձմեռ դուրսն են պահում,  
լաւ փաթաթած պառկեցնում են թախտե-  
րի վրա։ Մինչև անգամ ձմեռ ժամանակ ան-  
կողինները դուրս են բերում պատշգամբներն  
ու վերանդաները և պառկեցնում նրանց վրա  
հիւանդներին, այնպէս որ երբեմն ձիւնը  
նստում է նրանց վերմակի վրա, իսկ հիւանդը  
խանձարուրի նման փաթաթուած է լինում  
տաք վերմակներով։

Այսպիսի բժշկութիւնը (բաց օդում)  
այժմ համարվում է ամենաազդու բժշկու-  
թիւնը թոքախտի դէմ։

Ուրեմն պէտք է ամեն կերպ օգտուել  
պարզ օդով։

Եթէ հիւանդը ոտի վրա է, նա պէտք  
է ցերեկը դուրսն անցկացնի, հանդարտ  
զբօսնի (և ոչ այնպէս, որ քրտնի ու յոգնի),  
քաղաքից դուրս գնայ և այլն։ Գիշերները,  
տաք եղանակին, կարող է նոյնպէս պատըշ-  
կամբի վրա բաց օդում քնել, կամ լուսա-  
մուտները բաց թողնել ու սենեակում պառ-  
կել։ Քամոտ եղանակին չպէտք է դուրս  
գալ։ Ջերմող ու հեշտ քրտնող հիւանդները  
պէտք է անցարժ, բոլորովին հանդիստ  
մնան և աւելորդ շարժումներ չանեն։ Նրանք  
պիտի պառկած լինեն և հոգեպէս էլ հան-

դիստ: Այդպիսիներին պիտի պառկեցնել մի թախտի վրա անշարժ ու բաց օդում պահել:

Տնից դուրս գալիս պէտք է տաք հագնուել. բայց քա՛հ հագնուել չի նշանակում քա՛հ հագնուել: Առհասարակ մեր մէջ հիւանդին «փալանում են», այսինքն այնքան շորեր են բաշում վրան, որ խեղճը ուղղակի խեղդւում է և անկարող է ազատ շարժուել ու ազատ շունչ քաշել: Շատ հագնուելը օգուտի փոխարէն վնասում է հիւանդին. վնասում է նրանով, որ այդքան ծանրութիւնից նա քրտնում է, չնչառութիւնը դժուարանում է, սիրտը բաբախում: Իսկ ամենքը գիտեն, որ քրտնած մարդը աւելի հե՛տ է մտնում:

Ցուրտ եղանակներին ու ձմեռը բարակացաւ ունեցողին հագցրէք բրդէ շապիկ ու վարտիք, բրդէ գուլպայ, և նոյնպէս բրդէ կամ մահուդէ հագուատ: Դուրս գալիս հետը պիտի մի շալ կամ ծածկոց վերցնի:

Մեր երկրի սարերի, մեր անտառները օգը հրաշալի է: Ով կարող է, թո՛ղ տանի իր հիւանդին այդ լեռները: Այնտեղ հիւանդը կ'ապրի բնութեան գրկում, կը շնչի լեռնային մաքուր ու անուշաբոյր օդը և բիչ

ժամանակից յետոյ կը տեսնէք, որ հիւանդը թարմացաւ, ախորժակը բացուեց, երեսին գոյն եկաւ, քաշն աւելացաւ, տրամադրութիւնը լաւացաւ.—մի խօսքով մեռնողը կենդանացաւ:

Ի հարկէ բոլոր թորթախտաւորները այսպէս շուտ չեն լաւանում: Եթէ հիւանդութիւնը հնացած է, թորերը կերուած են, էլ ո՛չ մի միջոց չի օգնի, բայց չհնացած դէպքերում օգը կարող է բժշկել հիւանդին, գոնէ նրա ոյժերը կ'աւելանան և ամբողջ կազմուածքը կը կազդուրուի:

#### Բ. Ս Ա Ն Ա Ն Պ

Թորթախտաւորին անհրաժեշտ է լաւ սնունդ տալ, որ ոյժերը պաշտպանուեն:

Ուտելիքը պիտի սննդարար լինի և առատ: Կերակուրները պէտք է ընտրի ինքը հիւանդը: Պէտք է փոփոխել ուտելիքը, որ չձանձրանայ և միշտ ախորժակով ուտի:

Ի՞նչ պէտք է տալ հիւանդին:

Մսեղէնն ու կաթնեղէնը գլխաւոր նիւթերն են:

Շատ օգուտ է հում միսը (ի հարկէ առողջ կենդանու միսը): Բայց եթէ հիւանդը հում միս չի սիրում, պէտք է եփել կամ

խորովել: Մտից շինում են չոր միս կամ մսափոփ և մսաջուր:

Մսափոփն ծախվում է ամեն տեղ, բայց կարելի է տանն էլ պատրաստել:

Վերցրե՛ք մի մեծ կտոր միս առանց ճարպի, մի գուլ դանակով բերե՛ք, լցրե՛ք մի ամանի մէջ: Յետոյ մի պղնձով ջուր դրե՛ք կրակի վրա ու երբոր ջուրը կըսկսի եռալ, բերուած միսը իր ամանով դրե՛ք այդ կաթսայի ջրի մէջ (այնպէս որ ջուր չլցուի մտի մէջ), և այնքան եփ տուէք ջուրը, որ միսը չորանայ: Զորացած միսը վերցրե՛ք և հաւանգի մէջ ծեծե՛ք և կամ ձեռի աղօրիքով աղացե՛ք, փոշի շինեցե՛ք:

Այսպիսով կը ստանաք մսափոփի, որից կը խառնէք մսաջրի հետ, կաթի հետ և այլն ու կ'ուտեցնէք հիւանդին.—օրուայ մէջ կարելի է 2—3 սեղանի գդալ (և աւելի) ուտեցնել:

Մսահիւրը հանում են մտից, ճղմելով միսը երկու փայտի կամ քարի մէջ: (Հիմի քաղաքներում առանձին մամուլներ—պրէսներ են ծախում դրա համար): Հանած հիւթի մէջ կարելի է գցել մի երկու ձուի դեղնուց, մի երկու գդալ կոնեակ, կամ ուժ ու արագ և ուտել:

Մտից պատրաստում են նոյնպէս և ռի մսաջուր: Վերցրե՛ք մի ֆունտ լաւ միս, շատ մանր կտրտեցե՛ք ու ածե՛ք մի շշի մէջ, յետոյ մի երկու-երեք գդալ ջուր լցրե՛ք վրան, աղ արե՛ք, կ'ուղե՛ք մի քիչ էլ կանաչեղէն կոտորեցե՛ք մէջը, յետոյ շշի բերանը խցանով փակեցե՛ք ու դրե՛ք ջրով լիքը կաթսայի (պղնձի) մէջ: Պղինձը դրե՛ք կրակի վրա, մի-երկու անգամ եփ տուէք: Եփ տալիս շշի միջի միտն ու ջուրն էլ եփ կը գան: Մի երկու ժամից յետոյ միսը կ'եփուի և իր հիւթը դուրս կը տայ: Այս մի շատ սննդաբար կերակուր է: Այս մսաջրի մէջ էլ կարելի մի երկու ձուի դեղնուց գցել և մի-երկու թէյի գդալ կոնեակ կամ ուժ խառնել:

Սակայն չպէ՛տք է մոռանալ, որ որբան էլ մզենք մտից հիւթը, նրա մէջ դարձեալ շատ սննդաբար նիւթ է մնում, այնպէս որ հիւանդը լաւ կ'անի, որ աշխատի հիւթի հետ միտն էլ ուտել:

Իւղալի կերակուրները նոյնպէս շատ օգտաւէտ են, որովհետեւ լաւ սնունդ են տալիս հիւանդին: Պէտք է ասած, որ մեր բոլոր կերակուրների մէջ իւղ կայ, բայց անուամենայնիւ լաւ է, որ առանձին էլ

տեն: Շատ օգուտ է կարագը, կաթի սե-  
րը, նոյնիսկ ճարպը, եթէ մարսւում է:

Այս հիման վրա թոքախտաւորին, մա-  
նաւանդ երեխաներին ձկան իւղ են տալիս:  
Ձկան իւղը ծախւում է դեղատներում և  
դեղավաճառանոցներում: 8—10 տարեկան  
երեխաներին պէտք է տալ 2 թէյի գդա-  
լից մինչեւ 2 հացի գդալ, իսկ հասակա-  
ւորները կարող են ընդունել 3-ից մինչև  
10 հացի գդալ, ի հարկէ եթէ լաւ մարս-  
ւում է: Ձկան իւղը շատ օգտակար է նաև  
նուազ, սակաւարիւն երեխաներին, նոյնպէս  
և գեղձախտ ունեցողներին:

Կաթը պարունակում է իր մէջ մեծ քա-  
նակութեամբ սննդարար նիւթեր, այն էլ  
դիւրամարս կերպով: Կաթը պէտք է լինի  
թոքախտաւորի գլխաւոր սնունդը: Կարե-  
լի է տալ ամեն կերպ և ամեն ժամանակ:  
Մածունը նոյնպէս շատ օգուտ է. էլ չեմ  
խօսում սերի մասին: Սակայն չպէտք է ի չարը  
գործ դնել, որովհետեւ չափազանց շատ  
կաթը հիւանդը անկարող է մարսել: Կաթը  
պէտք է շատ լաւ տաքացրած լինի. օրական  
3-ից մինչեւ 6 բաժակ կարելի է գործածել  
թէ անխառն և թէ թէյի, սուրճի ու կակաոյի  
հետ:

Կաթից պատրաստում են կումիս կամ  
կէճիր: Կումիսը պատրաստում են ձիու կա-  
թից. սա մի չափազանց հեշտ մարսական կաթ  
է, որ շատ օգուտ է առհասարակ թոյ-  
լերին: Պէտք է սկսել մի երկու բաժակից  
և աւելացնել մինչև 6—10 շիշ: Սրա ազ-  
դեցութեան ներքոյ հիւանդի ախորժակը  
լաւանում է և քաշը աւելանում:

Կէճիրը նոյնպէս շատ մարսական  
խմիչք է. նա պատրաստւում է կովի կաթից  
և կարելի է շինել ամեն տեղ: Նոյն ձևով  
է գործածւում, ինչ որ կումիսը:

Սպիրտային խմիչքներ: Սպիրտը թոյն  
է և առողջ մարդը երբէք չպէտք է ոչ արագ,  
ոչ դինի, ոչ էլ ուրիշ խմիչքներ գործածի,  
իսկ եթէ գործ էլ ածի, շատ քիչ. այն էլ  
ըրախառն: Բայց այս թոյնը թոքախտաւորին  
օգուտ է, եթէ չափաւոր կերպով է ընդուն-  
ւում. բաւական է օրական երկու-երեք թէյի  
գդալ օղի կամ կոնեակ, ինչպէս ասել ենք,  
այսինքն ջրով, կամ մնաջրի ու կաթի մէջ:

Կանաչեղէն, հացեղէն, քաղցրեղէն,  
միրգ—ամեն բան կարելի է տալ հիւանդին,  
եթէ նրա մարսողութիւնը խանգարուած չէ:  
Առհասարակ պէտք է աշխատել, որքան

կարելի է փոփոխել կերակուրները, հիւանդի հաճոյքին յարմարուելով:

Մենք չենք կարող այստեղ դեղեր նըշանակել, այդ բժշկի գործն է, միայն ուզում ենք մի երկու խօսք ասել պատահարների մասին:

Արիւնհոսութիւն: Արիւնհոսութիւնը կարող է լինել ըթից էլ, թորերից էլ: Թորերինը աւելի երկիւղալի է և ցոյց է տալիս, որ թորերը ուտվում են: Նա բացվում է հազալիս, իսկ ըթինը առանց հազի է լինում և մեծ մասամբ ըթից է դալիս.— արիւնը կարող է ըթից բուզը լցուել և բերանից դուրս գալ:

Արիւնհոսութեան միջոցին հիւանդին անշարժ պառկեցրէք անկողնու վրա, կրծքին դրէք սառուցով կամ ձիւնով լի պարկ (կարելի է վերցնել գառան փամփուշտ ու մէջը ջարդած սառուց լցնել), գլուխն ու կուրծքը բարձրացրէք ու գլխի տակը բարձեր դրէք: Միևնոյն ժամանակ սառուց կուլ տալ տուէք, իսկ եթէ չկայ, աղաջուր խմացրէք: Եթէ այդ ժամանակ էլ չդադարի արիւնը, պէտք է ոտերն ու թեւերը ամուր կապել (ծնկներից ու արմունկներից վեր), որպէսզի արիւնը կանգնի ու

թորերի միջի արիւնը պակասի: Կարելի է թաշկինակներով կապել, բայց պէտք է շատ պինդ սեղմել:  $\frac{1}{4}$ — $\frac{1}{2}$  ժամ յետոյ միայն կարելի է կապանքները վերցնել:

Ձեռմի ու frshնֆի դէմ պէտք է տալ խինա և առաւօտ-երեկոյ սառը ջրով շրփումներ անել մարմին:

Թ

ԹՈՒՔԱԽՏԸ ԲՈՒԺԵԼԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ Է

Երբոր իմանաք, որ ձեր կամ ձեր որդու հիւանդութիւնը թորախտ է, մի՛ յուսահատուէք, իմացէ՛ք, որ կարող է բժեկուել, եթէ ժամանակին բժեկի դիմէ՛ ու նրա խորհրդով ապրէ՛: Հէնց որ իմացաք, որ հիւանդութիւնը մտել է ձեր մէջ, իսկոյն թողէք ձեր բոլոր պարապմունքները ու միքանի ամսով գնացէք սարերը լաւ օդի մէջ անհոգ ապրելու ու լաւ սնունդ առնելու:

Ժ

ԹՈՒՔԱՆՏԱՒՈՐՆԵՐԸ ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԱՄՈՒՍՆԱ-  
ՆԱԼ, Թ՛Է ՈՉ

Թորախտ ունեցողը իրաւունք չունի ամուսնանալու, որովհետեւ նախ, նա իրան կը վնասի և երկրորդ, իր կնոջն ու ապագայ երեխաներին: Իրան վնասում է նրանով, որ ընտանեկան կեանքը նրան թուլացնում է, հոգսերով անհանգիստ է լինում անդադար և այլն: Իսկ կինը կարող է վարակուել նրանից և հիււադոտ երեխաներ ծնել:

Սարսափելի է թորախտաւորի ընտանիքի դրութիւնը. հայրը բանից-գործից ընկած, նիհարած—կմախք դարձած, անդադար հազարով ու թքելով, մի անկիւնում ընկած սպասում է մահուան, որ պիտի փրկի նրան այդ տանջանքներից: Մայրը յուսահատ, արդէն վարակուած, իր աշխատանքով է տունը պահում: Նա հազիւ քրտինքով մի կտոր հաց է ճարում իր երեխաներին կերակրելու համար: Իսկ երեխաները! Նիհար, գունատ, փորրահասակ, թեւերն ու ոտերը լղար ու չոփ դարձած. մէկը արդէն թորախտ ստացած, միւսը

տանջվում է անդադար վզի դեղձերի խոցերից կամ աչքացաւից, մի երրորդը ծունկը, արմունկը կամ ազդրը ուռած, բորբոքուած, որովհետեւ ոսկորների մէջ է ընկել ախտը և կերել է, խոցեր գոյացրել, բորբոքել!... Ո՞ր մէկն ասենք: Երբեմն ամբողջ ընտանիքներ մատնուած են յաւիտենական տանջանքի կամ վաղաժամ մահուան, և այս բոլորը մէկի (հօր կամ մօր) մեղքից!...\*):

Թորախտաւորը չպէտք է ամուսնանայ հետեւեալ պատճառներով.

1) Պատկուած մարդը մեծ պարտաւորութիւններ ունի դէպի իր կինն ու զաւակները. հազար ու մի հոգսերով լիքն է նրա սիրտը. իր ընտանիքը կերակրելու համար նա ստիպուած է աւելի աշխատել, աւելի յոգնել, հազար ու մի վշտեր տանել.—այս ամենը ի հարկէ ուժասպառ են անում նրան ու սաստկացնում հիւանդութիւնը:

Բարակացաւոտ աղջիկն էլ չպէտք է մարդու գնայ, որովհետեւ այս բոլոր հոգսերի վրա աւելանում է և յղութեան ու

\*) Տե՛ս իմ «Ամուսնութիւն» գիրքը, որի մէջ մանրամասն խօսում եմ թորախտի ժառանգականութեան մասին:

ծծմայրութեան ծանրութիւնը, որոնք սաստիկ ուժասպառ են անում հիւանդին ու արագացնում մահը:

2) Մենք արդէն դիտենք, որ եթէ ամուսիններից մէկը թողախտ ունի, միւսն էլ վարակվում է նրանից: Ահա մի ծաղկափթից մատաղահաս աղջիկ, վառվռուն թըշերով, թարմ, գեղեցիկ կազմուածքով: Նըրան ամուսնացնում են մի թողախտաւորի հետ, և միքանի ամսից կամ տարուց յետոյ խեղճ կինն սկսում է հալուել-մաշուել, կորցնում է իր թարմութիւնն ու աշխոյժը, դունատվում է ու լղարում:—Նա վարակուած է:

Ո՞վ չի տեսել այսպիսի զոհեր և հոգով չի խղճացել նրանց!

Նոյնիսկ եթէ կինը չի վարակուել ու մի հրաշքով առողջ է մնացել, դարձեալ դառն ու անմխիթար է նրա կեանքը:

Թողախտոտ ամուսինը կամաց-կամաց կորցնում է իր ոյժերը, անկարող է դառնում առաջուկայ պէս աշխատել—ընտանիքը պահելու համար, յետոյ անկողին է ընկնում ու քաղցած թողնում կնոջն ու զաւակներին: Այն ժամանակ կնոջ համար ըսկըսվում է մի տանջալից կեանք: Մի կողմից

այն անասելի վիշտը, որ պատճառում է նրան ամուսնու սոսկալի հիւանդութիւնը և սպասուող մտադայ մահը, միւս կողմից երեսխաների դառը դրութիւնն ու չքաւորութեան ծանրութիւնը.—այս բոլորը խեղճի կեանքը դժոխք են դարձնում:

3. Թողախտ ունեցողը չպէտք է (կասենք մինչեւ անգամ իրաւունք էլ չունի) ամուսնանալու և այն պատճառով, որ ինչպէս ասել ենք, այսպիսի ամուսնութիւններից յաճախ հիւանդոտ, թուլակազմ ու թողախտաւոր զաւակներ են ծնվում, որոնք, երկար չեն ապրում, իսկ եթէ ապրում էլ են, վայ այն ապրելուն:

Ասածներիցս պարզ է, որ բարակացաւ ունեցողների համար ուղղակի մեղք է ամուսնանալը, որովհետեւ այդ ամուսնութիւնից անբաղդանում է ոչ միայն ինքը հիւանդը, այլև նրա անմեղ կինն ու ապագայ սերունդը:

Սակայն թողախտ ունեցողը չպէտք է յուսահատուի, որովհետեւ թողախտը բուժելի հիւանդութիւն է: Թո՛ղ բժշկուի ու բժշկուի խորհրդով կեանք վարի և նա կարող է առողջանալ. այն ժամանակ բժիշկը թո՛ղ

կը տայ նրան պսակուելու: Բայց առանց բժշկի թոյլտուքեան բարակացաւ ունեցողը, թէկուզ առողջացած էլ լինի, երբէք չպիտի կապի իր կեանքը ուրիշի հետ:

Իսկ ինչ վերաբերում է թոքախտաւորներին զաւակներին, նրանք պէտք է սպասեն մինչև 20—30 տ. հասակը, և եթէ մինչև այդ ժամանակ առողջ են մնացել, կարող են ամուսնանալ, որովհետև ժառանգական բարակացաւի ժամանակն արդէն անցած կը լինի:

Վ Ե Ր Չ



« Ազգային գրադարան



NL0285477

## Հեղինակի միւս հրատարակութիւններ

- 1) Ժանտախտ (մի քանի օրինակ միայն) 20 կ.,  
 2) Խօլերայի մասին (սպառուած), 3) Խօլերա 5 կ.,  
 4) Հիպնոտիամ հատ. I. (մի քանի օրինակ միայն) 25 կ., 5) Հիպնոտիամ հատ. II. 15 կ., 6) Կարոցական առողջապահութիւն (պատկերադարդ) 50 կ.,  
 7) Առողջ երեխաների խնամատարութիւն 25 կ.,  
 8) Սիֆիլիս, կակուղ շանկր, Սուսուճակ 25 կ.,  
 9) Թշուառների բարեկամ բժշկ Հաազ 20 կ.,  
 10) Ամուսնութիւն . . . . . 75 կ.

## ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ

- № 1. ՄԻ ԽՄԻՐ, երկրորդ սպ. . . . . 5 կ.  
 № 2. ՎԱՏ ՅԱԻ . . . . . 6 կ.  
 № 3. ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒՂՆԻՈՒԹԻՒՆՆԵՐ  
 ԵՒ ՆՐԱՆՅ ԹՈՅՆԸ 23 նկ. . . . . 15 կ.  
 № 4. ԹՈՒՔԱՍՏ ԿՍՄ ԲԱՐԱԿՍՅԱԻ . . . . . 10 կ.  
 № 5. ԴՊՂԷՐՈՅՔ ԿՍՄ ՄԱՂԱՐԻԱ . . . . . 5 կ.  
 № 6. ԻՆՖԼՈՒԷՆՅԱ ԿՍՄ ՆՈՐ ՅԱԻ . . . . . 3 կ.  
 (Թ ո յ ո Ր Ե Է Լ Ե Կ ա Ր Ե Ե ր ո Վ Է )

Պատրաստում են. 1. Մի ծիւր, 2. Նորածին մանուկների հիւանդութիւնները, 3. Մաղիկը և ծաղիկ կարելը, 4. Քուլթէշ կամ Սկարլատինա, 5. Ի՛նչ է մրսելը, 6. Ի՛նչ է երազը, 7. Կարմրուկ, 8. Խնամեցէք ձեր մանուկների աչքերն ու ախանջները, 9. Պատահական ցաւերն ու հիւանդութիւնները և նրանց բժշկութիւնը, 10. Պատանիների սխալները:

Շախոբուճնե՝ «Կինկոսնակամ» և «Պուսսեմբերգ» գրականատանոցներում, Նոյնպէս և հեղինակի մօտ: